# «Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

____ ______________ 2017 թիվ ____-Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 279-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2017 թվականի

______________ ____ N ____-Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ**

1. Երևան քաղաքում իրականացվող վարսավիրական ծառայությունների մատուցման, հանրային սննդի օբյեկտների (բացառությամբ` մինչև 50 քառ. մետր սպասարկման սրահի մակերես ունեցող օբյեկտների), ավտոտեխսպասարկման կայանների (կետերի), ավտոկանգառների, բիլիարդ խաղի, սեղանի թենիս խաղի, մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով առևտրի, մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման, ատամնաբուժական, ատամնատեխնիկական գործունեության տեսակների մասով արտոնագրային հարկի հաշվարկման համար լրացուցիչ գործակիցների կիրառման նպատակով հիմք ընդունվող` Երևան քաղաքի գոտիները նկարագրվում են հետևյալ կերպ`

| Գոտին | Տարածքը |
|---|---|
| Առաջին | Առաջին գոտու տարածքը սահմ<br>Մաշտոցի պողոտայով սկսած` Գրի<br>փողոցի հետ հատումից մինչև Սւ<br>Սարյան և Մոսկովյան փողոցներով<br>Բաղրամյան պողոտա, Մարշալ<br>պողոտայով մինչև Մարշալ Բաղրա<br>փակուղի, այնուհետ Իսահակյան<br>Թամանյան փողոց, Թամանյան փ<br>Անտառային փողոց, Անտառային<br>Մատենադարան, այնուհետ` Տերյ<br>փողոցների վերջնամասով` ներառ<br>պուրակը, Աբովյան փողոցով մի<br>փողոց, Կորյունի և Նալբանդյան<br>մինչև Խանջյան փողոցի հետ հատ<br>Ագաթանգեղոս, Գրիգոր Լուսավոր<br>մինչև Մաշտոցի պողոտ |
| Երկրորդ | Երկրորդ գոտու ներքին սահմանն<br>են առաջին գոտու տարածքը սա<br>փողոցների հետ, իսկ արտաքին<br>անցնում են Աբովյան պուրակո<br>Հերացու փողոցով մինչև Կորյուն<br>հատվելը, այնուհետ Չարենցի<br>փողոցներով, Տիգրան Մեծի պող<br>Քրիստափորի փողոց, Քրիստափ<br>Արշակունյաց պողոտայով մինչև<br>2-րդ նրբանցքի հետ հատվելը, Արշ<br>նրբանցքով, Արտաշատի ջրան<br>Հաղթանակի կամուրջ, այնուհետ<br>կամրջով, Մաշտոցի պողոտայի<br>Սուրբ Սարգիս եկեղեցու շրջակայ<br>Ձորագյուղի տարածքը, այնուհե |

| | |
|---|---|
| | փողոցով մինչև Զորափի փողո<br>փողոցով մինչև Ուրուգվայի հրա<br>Պարոնյան և Պռոշյան փողոցներով<br>փողոց, Այգեձորի փողոցով մին<br>Բաղրամյանի 2-րդ նրբանցք, Մարշ<br>2-րդ նրբանցքով, Մարշալ Բաղր<br>անցուղով, Սոսեի փողոցով մինչ<br>փողոց, այնուհետ Անտառային փ<br>Թամանյան փողոցի հետ հ |
| Այլ | Երևան քաղաքի վարչական տ<br>ներառված՝ առաջին և երկրորդ<br>չընդգրկված տարածք՝ բացառո<br>հավելվածի 2-րդ կետում ներկայաց |

2. Երևան քաղաքում հանրային սննդի (բացառությամբ՝ մինչև 50 քառ. մետր սպասարկման սրահի մակերես ունեցող օբյեկտների) կազմակերպման գործունեության համար՝ բացի սույն հավելվածի 1-ին կետով սահմանված տարածքներից՝

1) առաջին գոտու տարածքում ներառվում են նաև Մյասնիկյան պողոտան և Աճառյան փողոցները՝ մինչև Աճառյան 2-րդ փակուղու հետ հատվելը և Հրազդանի կիրճն ամբողջությամբ.

2) երկրորդ գոտու տարածքում ներառվում են նաև Լենինգրադյան և Զանիբեկյան փողոցներն ու Սիլիկյան թաղամասը: